

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 29/1

18 հոկտեմբերի 2016թ.

Քննարկվեց «Կորսան-Կորվիամ Կոնստրուկցիոն» ԲԸ հայաստանյան մասնաճյուղի 05.09.2016թ. գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 25.08.2016թ. թիվ 1010474 ակտի դեմ:

Քննարկման ընթացքում նշվեց, որ համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 07.05.2014թ. թիվ 1010474 հանձնարարագրի «Կորսան-Կորվիամ Կոնստրուկցիոն» ԲԸ հայաստանյան մասնաճյուղում կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 25.08.2016թ. թիվ 1010474 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով լրացուցիչ վճարման է առաջադրվել ընդամենը 2.663.495.640 դրամ, ինչպես նաև 1.681.861.257 դրամ հարկի պակասեցվող գումար:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ գանգատի վերաբերյալ իրավաչափ որոշում կայացնելու համար գործին առնչվող փաստական հանգամանքները լրացուցից ուսումնասիրության կարիք ունեն, ինչպես նաև անհրաժեշտ է ձեռնարկել միջոցներ խնդրո առարկա հարցերի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն ձեռք բերելու ուղղությամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի դրույթներով՝ Հանձնաժողովը գտնում է, որ գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը ենթակա է կասեցման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո ր ո շ ու մ է՝

«Կորսան-Կորվիամ Կոնստրուկցիոն» ԲԸ հայաստանյան մասնաճյուղի գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը կասեցնել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ